Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք!

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ

ԼԵՆԻՆԱԿԱՆ 1936 թ.

ԼԵՆ. ՏԵՂԱՐԴԻ ՏՊԱՐԱՆ

## ԼԵՆ․ ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԲՈԼՈՐ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

*Ելնելով ժողովուրդների սիրելի առաջնորդ ընկ. ՍՏԱԼԻՆԻ ստախանովյան առաջին հավաքում արված պատմական ցուցումներից, որի համաձայն մեր ժողովրդական տնտեսությունն ավելի լայն թափ է ընդունում՝ ավելի սուր կերպով է դրվում խորհուրդների ու նրա ներքին օղակների (սեկցիաների ու խորհմարմինների) ծավալուն աշխատանքը։*

*Ժողովրդա-տնտեսական պլանի կատարումը և ստախանովյան շարժման—սոցիալիստական մրցության այդ բարձր ձևի զարգացումն ու ծավալումը նոր հսկայական կարևոր խնդիրներ են դնում խորհուրդների առաջ, խնդիրներ, որոնց կատարումը պահանջում է վճռականորեն բարելավել խորհուրդների ողջ աշխատանքը։ Այդ խնդիրների անհրաժեշտությունից ելնելով, սեկցիայի յուրաքանչյուր անդամը պետք է իսկական բոլշևիկյան աշխատանք կատարի տվյալ գործարանի, ցեխի, ավտոպարկի, հիմնարկ—ձեռնարկության մեջ ստախանովյան մեծ շարժումը ծավալելու և ինքն անձամբ այդ ճակատամասի առաջամարտիկը լինելու։*

*Լենինականի քաղխորհուրդը նկատի ունենալով սեկցիաներին ու նրանց անդամներին ավելի լավ ծանոթացնելու իրենց անելիքների հետ և ընդառաջելով մի շարք սեկցիաների որոշումներին, հրատարակում է սույն կանոնադրությունը՝ սեկցիաների, նրանց բյուրոների, հսկիչ պոստերի և առանձին անդամների անելիքների մասին։*

*Սեկցիաները, նրանց բյուրոները, հսկիչ պոստերը և առանձին անդամները պարտավոր են ուսումնասիրել և մասսայականացնել սույն կանոնադրության մեջ դրված խնդիրները։*

*Սեկցիաները նրանց բյուրոները, հսկիչ պոստերը և առանձին անդամները պարտավոր են անշեղորեն ղեկավարվել սույն կանոնադրությամբ։*

ԼԵՆ. ՔԱՂԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԲԱԺԻՆ

22—II մարտի 1936 թ. Տպ.
Լենինական

*Հաստատված է Լենինականի քաղխորհրդի նախագահության կողմից 22 մարտի 1935 թ. (արձ. № 6 §—13)*

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՍԵԿՑԻԱՆԵՐԻ

*Քաղխորհրդի սեկցիաների ցանցն ընդլայնելու, ինչպես նաև սեկցիաները կուսակցության և կառավարության որոշումների կատարման իսկական մասսայական օրգաններ դարձնելու նպատակով, Լենինականի քաղաքային խորհուրդը կազմակերպում է սեկցիաներ հետևյալ հիմնական սկզբունքներով։*

## ՍԵԿՑԻԱՆԻՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

*Լենինականի քաղխորհրդի սեկցիաները, որպես աշխատավոր մասսաների քաղաքի տնտեսական և կուլտուրական գործունեության առանձին բնագավառների գործնական աշխատանքներին մասնակից դարձնելու հիմնական ձև, հետապնդում են հետևյալ խնդիրները։*

*ա. Կազմակերպում և անմիջական գործնական օժանդակություն են ցույց տալիս Լենքաղխորհրդին ու նրա բաժիններին՝ կենսագործելու կարևորագույն տնտեսական—քաղաքական և կուլտուրական ձեռնարկումներ պլանայինական՝*

շինարարական, ֆինանսական և այլ պլանների կատարման, սոցմրցման ու հարվածայնության ամենալայն ծավալման, աշխատանքի արտադրողականության բարձրացման և արտադրական դիսցիպլինայի ամրապնդման, արտադրանքի որակի բարձրացման և ինքնարժեքի իջեցման, պետական ապարատի բարելավման, բնակարանները ժամանակին վերանորոգելու, շենքերի սանիտարական դրությունը բարելավելու, քաղաքի արտաքին բարեկարգման, մասսայական—քաղաքական—դաստիարակչական աշխատանքների ծավալման և այլ աշխատանքների բնագավառներում:

բ. Կազմակերպում են մասսայական վերահսկողություն կուսակցության, կառավարության և իշխանության տեղական օրգանների վորոշումների կատարման վրա:

գ. Ամեն կերպ օժանդակում են կուսակցական և խորհրդային վերահսկողության հանձնաժողովների աշխատանքներին:

դ. Մասնակցում են արհմիությունների հետ միասին առանձին պետական հիմնարկությունների վրա բանվորական շեֆության հաստատելու, ինչպես նաև բանվորների սոցհամատեղությունը պետապարատներում ծավալելու աշխատանքներին:

ե. Ամենօրյա աշխատանք են տանում կանանց ներգրավելու սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառները, ինչպես նաև առաջ քաշելու նրանց սովետական և խորհրդային ղեկավար աշխատանքներում:

Այս խնդիրների իրացման ուղղությամբ սեկցիաների կողմից տարվող աշխատանքները պետք է ապահոված լինեն ամենօրյա դասակարգային զգոնությամբ, դասակարգային խորթ և թշնամի տարրերի, ինչպես նաև հակապետական տրամադրությունների դեմ անհաշտ ու դաժան պայքարով,

1-3567գր



հեղափոխական օրինականությունն ամրապնդելու և սոցիալիստական սեփականությունը պաշտպանելու համար մղվող պայքարով՝ կուսակցության և խորհրդային իշխանության բոլոր թշնամիներին հայտնաբերելու և մերկացնելու միջոցով:

2. Լենինականի քաղխորհրդին կից պարտադիր կերպով կազմակերպվում են հետևյալ 13 սեկցիաները:

1. Բարեկարգման
2. Արդյունաբերության
3. Երկաթուղային տրանսպորտի
4. Պետառևտրի և կոոպերացիայի
5. Հասարակական սննդի
6. Երկրի պաշտպանության
7. Հեղափոխական օրինականության
8. Ֆինանսական
9. Առողջապահական
10. Լուսավորության
11. Կոմունալ—ձեռնարկների
12. Գյուղատնտեսական
13. Անգրագիտության ու կիսագրագիտության վերացման:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Քաղխորհրդի նախագահության վորոշմամբ համակից ճյուղերում աշխատող սեկցիաները կարող են միացվել, այլև ստեղծվել բացի վերոհիշյալներից, այլ սեկցիաներ ևս:

3. Սեկցիաների կազմի մեջ մտնում են

ա. Քաղխորհրդի անդամները և նրա թեկնածուներն իրենց ընտրությամբ:

բ. Այն ակտիվիստները, ձեռնարկությունների և հիմնարկությունների հարվածայինները, վորոնց ընտրում են

արհեստակցական միությունները, հասարակական, ԼԿՅԵՄ կազմակերպությունները, խորհրդային պատգամավորական խմբակները։

գ. Գիտական հիմնարկությունների և բարձրագույն դպրոցական հաստատությունների, խորհտնտեսությունների, ՄՏԿ-ների, Կարմիր Բանակի ներկայացուցիչները և անձնապես հրավիրված անհատները

դ. Համապատասխան բաժինների և տեսչությունների ղեկավարները։

4. Քաղխորհրդի յուրաքանչյուր անդամ պարտավոր է ըստ իր ընտրության ակտիվորեն աշխատել վորևէ սեկցիաներից մեկում։

5. Սեկցիայի աշխատանքներում նրա բոլոր անդամները օգտվում են վճռական ձայնի իրավունքով։

## ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՆԵՐ

6. Սեկցիան իր միջից ընտրում է բյուրո՝ իր լիազորությունների ժամանակաշրջանով, նախագահի, քարտուղարի և վոչ ավելի քան հինգ անդամի կազմով. Սեկցիայի նախագահին և քարտուղարին հաստատում է քաղխորհրդի նախագահությունը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — Սեկցիայի բյուրոյի կազմի մեջ պարտադիր կերպով մտնում է քաղաքային աշխատանքի համապատասխան ճյուղի ղեկավարը, սակայն նա չի կարող սեկցիայի և բյուրոյի նախագահ կամ քարտուղար լինել։

7. Բյուրոն սեկցիայի կարգադրիչ և գործադիր մարմինն է և իր աշխատանքի համար պատասխանատու է սեկցյայի առաջ։

## ՍԵԿՑԻԱՅԻ ԲՅՈՒՐՈՅԻ ՅԵՎ ՍԵԿՑԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Սեկցիայի նախագահը և սեկցիայի բյուրոն՝

ա. Նախապատրաստում են սեկցիայի քննության յենթակա հարցերը, հավաքում և սիստեմատիզացիայի յեն յենթարկում այդ նպատակով անհրաժեշտ նյութեր։



բ. Կազմակերպում են սիստեմատիկ հսկողության սեկցիայի վորոշումների և ընտրողների նակազների կատարման վրա և սեկցիայի յուրաքանչյուր նիստում զեկուցում տվյալ ժամանակաշրջանում ընդունված վորոշումների կատարման մասին։

գ. Մշակում են սեկցիայի աշխատանքի ծրագիրը և հսկում նրա իրագործման վրա։

դ. Կազմակերպում, ղեկավարում և ստուգում են բրիգադների, ինչպես նաև առանձին պատգամավորների և սեկցիաների աշխատանքները։

յե. Աշխատանքները կանոնավոր կերպով բաշխում են սեկցիաներն անդամների մեջ և նրանցից պատրաստում առաջ քաշվածների և սոցհամատեղիների ռեզերվ։

զ. Հրավիրում են կանոնավորապես սեկցիաների նիստեր և բրիգադների ղեկավարների խորհրդակցություններ։

է. Առնվազն յերեք ամիսը մեկ անգամ հաշվետու յեն լինում սեկցիայի առաջ իրենց կատարած աշխատանքների համար։

ը. Սեկցիայի նախագահը մասնակցում է քաղաքային խորհրդի նախագահության նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով։

## ՍԵԿՑԻԱՅԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Սեկցիայի քարտուղարը՝

ա. Կազմում է սեկցիայի նիստերի արձանագրությունները ու վոչ ուշ 2-րդ օրն ուղարկում է քաղխորհրդի կազմբաժին։

բ. Հաշվառման է յենթարկում սեկցիայի և նրա բրիգադների անդամներին։

ը. Հաշվառման է յենթարկում սեկցիայի նյութերից հաճախորդներին

թ. Սեկցիայի վորոշումներն ուղարկում է ըստ պատկանելույն՝

ժ. Կազմում է սեկցիայի աշխատանքների մասին գրավոր հաշվետվություններ։

## ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

10. Այս կանոնադրության 1 հոդվածում նշված խնդիրները իրականացնելու նպատակով, Լենինականի քաղխորհրդի սեկցիաները.

ա. Կազմակերպում են քաղաքի սոցիալիստական շինարարության համապատասխան ճյուղերի պլանների կատարմանն աջակցելու համար հատուկ բրիգադներ, հսկիչ պոստեր, հասարակական տեսչություններ, ինչպես նաև արշավներ, կանչեր, մասսայական շաբաթօրյակներ և այլն։

բ. Մասնակցում են աշխատանքի պլանների, հաշվետվությունների, քաղխորհրդի նախագահության նիստերին մտցվելիք, ինչպես նաև քաղխորհրդի կողմից վերադաս մարմինների քննության առաջադրվելիք խնդիրների նախնական մշակմանը և քննարկմանը։

գ. Առաջադրում են քաղխորհրդի նախագահության և նրա բաժինների քննության ու լուծման սեկցիաների աշխատանքներից, ընտրողների պահանջներից և նակազներից բղխող խնդիրներ, ինչպես նաև քննում և կենսագործելու համար մշակում են սեկցիայի առանձին անդամների և ընտրողների առաջարկները.

դ. Կազմակերպում են հետազոտություններ և վերահսկողություն քաղաքի ձեռնարկությունների ու հիմնարկությունների գործունեության վրա, ընդվորում ստուգում են աշխատանքի առավել կարևոր բնագավառները, ներգրավելով այդ աշխատանքներին ձեռնարկությունների պատվիրակները, տեղական արհեստակցական և կոմյերիտական կազմակերպությունները։



11. Ժողկոմատները, ինչպես նաև համամիութենական, Անդրկովկասյան և հանրապետական նշանակություն ունեցող կազմակերպություններն իրենց բոլոր ձեռնարկումների կենսագործման աշխատանքներում հենվում են Լեն. քաղխորհրդի համապատասխան սեկցիաների վրա և ամեն կերպ օգնում են սեկցիաներին նրանց աշխատանքներում։

12. Սեկցիաների աշխատանքների հիմնական մեթոդը հանդիսանում է այն, վոր ըստ աշխատանքի առանձին բնագավառների և տեսակների, կազմակերպվում են մշտական և ժամանակավոր բրիգադներ։

## ԲՐԻԳԱԴՆԵՐՆ ԻՐԵՆՑ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

ա. Կազմակերպվում են աշխատավոր մասսաներին՝ կատարելու կոնկրետ արտադրական հանձնարարություններ ինչպիսին են՝ վերանորոգել մայթերը, սալահատակները, կատարել ծառատունկում, զբոսապուրակների բացում, միջոցների մոբիլիզացիա, հայտնաբերել լրացուցիչ յեկամուտներ, վերանորոգել դպրոցական շենքերը, ապահովել դպրոցականներին նախաճաշով, ինչպես նաև մատակարարել նրանց ուսումնական պիտույքներ և դասագրքեր, կազմակերպել կուլտուրական հանգիստ և այլն։

բ. Հետազոտում են սեփական նախաձեռնությամբ ու սեկցիայի նախագահի հաստատությամբ, ինչպես նաև սեկցիայի հանձնարարությամբ ձեռնարկությունները, հիմնարկությունները և կազմակերպությունները։

## ՀՍԿԻՉ ՊՈՍՏԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

14. Պատգամավորական խմբակներ չունեցող ձեռնար-

կություններում և հիմնարկություններում կազմակերպված հսկիչ պոստերը հսկում են քաղխորհրդի, նրա սեկցիաների վորոշումների կատարման վրա՝ տվյալ ձեռնարկությունում կամ հիմնարկությունում և աշխատանքի թերությունների մասին ահազանգում են քաղխորհրդի սեկցիաներին, հիմնարկ ձեռնարկության ղեկավարությանը և հասարակական կազմակերպություններին։

15. Սեկցիաներն իրենց աշխատանքների ընթացքում սերտ կապ են պահպանում ձեռնարկությունների պատխմբակների հետ հետևյալ միջոցով.

ա. Պատխմբակներին ներգրավում են՝ պարտադիր կերպով մասնակցելու սեկցիաների կողմից անցկացվելիք ձեռնարկումներին։

բ. Համաձայնեցնում են աշխատանքի ծրագրերը.

գ. Հրավիրում են սեկցիաների և պատ. խմբակների միացյալ նիստեր։

16. Յուրաքանչյուր սեկցիա աշխատում է քաղխորհրդի կողմից հաստատված ծրագրով։

17. Սեկցիան իր աշխատանքի համար հաշվետու է քաղաքի ընտրողների առաջ։

Սեկցիայի նիստերը պարբերաբար հրավիրվում են ձեռնարկություններում, հիմնարկություններում, բնակվարձկոոպ ընկերություններում և նման վայրերում։

## ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Սեկցիայի անդամները պետք է լինեն սոցմրցման, հարվածայնության, ստախանովյան աշխատանքի մեթոդների կիրառման նախաձեռնողները ու կազմակերպողները։

Սեկցիոններներն իրենց անձնական օրինակով պետք է ցուցադրեն սոցիալիստական վերաբերմունքի լավագույն նըմուշներ դեպի աշխատանքը, ինչպես նաև հետամուտ լինեն ընտրողների նակազների կատարմանը, ձեռք առնեն բոլոր միջոցները վերացնելու աշխատանքներում գոյություն ունեցող թերությունները և բարելավեն աշխատանքները՝ սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում, կանոնավոր կերպով հաշվետու լինեն ընտրողների առաջ իրենց գործունեության համար։



18. Սեկցիայի անդամները պարտավոր են ճշտապահորեն հաճախել սեկցիայի բոլոր նիստերին և կատարել սեկցիայի, նրա բրիգադների հանձնարարված աշխատանքները։

19. Սեկցիայի կամ բրիգադայի նիստից բացակայելու պատճառների մասին սեկցիայի անդամները պարտավոր են հայտնել սեկցիայի նախագահին կամ քարտուղարին։

20. Սեկցիայի, բրիգադների նիստերից անհարգելի պատճառով բացակայող, ինչպես նաև հանձնարարված աշխատանքների կատարումից խուսափող սեկցիայի անդամների մասին սեկցիայի բյուրոն հայտնում է համապատասխան հասարակական կազմակերպությանը։

21. Սեկցիայի նիստերից անհարգելի պատճառով սիստեմատիկաբար բացակայող, ինչպես նաև հանձնարարված աշխատանքների կատարումից համառորեն խուսափող սեկցիայի անդամները, սեկցիայի վորոշմամբ կարող են հեռացվել սեկցիայի կազմից, վորի մասին սեկցիայի բյուրոն պարտավոր է տեղեկացնել Լենքաղխորհրդի նախագահությանը և այն կազմակերպությանը, վորի ներկայացուցիչն է համարվում հեռացված սեկցիայի անդամը։

Սեկցիայի կազմից հեռացված սեկցիայի անդամը, յեթե միաժամանակ հանդիսանում է քաղխորհրդի անդամ կամ թեկնածու, նրան հետ կանչելու հարցը սեկցիան

կարող է փոխադրել ընտրողների ժողովը, կամ ներգործման միջոցներ կիրառելու և դույժի յենթարկելու համար հարց հարուցել քաղխորհրդի նախագահության առաջ։

22. Սեկցիայի յուրաքանչյուր անդամ իր աշխատանքի համար պարտավոր է հաշվետու լինել ընտրողների առաջ և հաշվետվության առթիվ, ընտրողների արած առաջարկները ներկայացնել սեկցիայի բյուրոյին կամ նախագահին։

23. Լենքաղխորհրդի վոչ անդամ սեկցիայի անդամները կարող են մասնակցել քաղխորհրդի պլենար և նախագահության նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով։

## ՍԵԿՑԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

24. Սեկցիաների աշխատանքները ղեկավարում է Լեն. քաղխորհրդի նախագահությունն իր կազմակերպչական բաժնի միջոցով։

25. Լենքաղխորհրդի բաժինները, տեսչությունները և ձեռնարկությունները պարտավոր են ակտիվորեն մասնակցել սեկցիաների աշխատանքներին, ամեն կերպ օգնել սեկցիաներին, մասնակից դարձնելով նրանց իրենց կողմից անց կացվելիք կարևորագույն ձեռնարկումներին։

26. Լենինականի քաղխորհրդի սեկցիաների վորոշումները կատարվում են հետևյալ կարգով՝

Իր իրավասության սահմաններում ընդունած վորոշումները սեկցիաները հանձնում են կատարման համար բաժինների վարիչներին, տեսչությունների, հիմնարկությունների ղեկավարներին։ Յեթե վորոշումը համապատասխան հիմնարկության ղեկավարին հանձնելու. որից անցել է հինգ օր և բողոքարկում տեղի չի ունեցել, սեկցիայի վորոշումը



ստանում է օրինական ուժ։ Քաղաքի հիմնարկությունների ղեկավարների կողմից սեկցիաների օրինական ուժ ստացած վորոշումը չկատարելու դեպքում, այդ ղեկավարները Լենինականի քաղխորհրդի նախագահության միջոցով կյենթարկվեն պատասխանատվության։

Սեկցիայի վորոշման հետ չհամաձայնվելու դեպքում բաժնի, տեսչության, հիմնարկության ղեկավարը հինգ օրվա ընթացքում հարցը փոխադրում է քաղխորհրդի նախագահության կամ նախագահի լուծման։

27. Լենինականի քաղխորհրդի սեկցիաների գործունեությունն ընդգրկում է նաև Լենինականի քաղաքի տերիտորիայի վրա գտնվող հանրապետական, ֆեդերատիվ և համամիութենական հիմնարկ—ձեռնարկությունների աշխատանքը, անկախ նրանց յենթակայությունից։

ԼԵՆԻՆԱԿԱՆ 1936 թ.
Մարտ ամիս.

ՀՀ Ազգային գրադարան
NL0928032

Պատվեր № 847, տիրաժ 1000 օր։ Գլավլիտ № 1

290

1
3567